# ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՆԱՄԱԿԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Վ Ա Զ Գ Ե Ն Ա–ԻՆ

Է Ջ Մ Ի Ա Ծ Ի Ն

Ձերդ Սրբություն,

Ինձ մեծ գոհունակություն է պատճառում Ձերդ Սրբությանը տեղեկացնելը, որ Փարիզում գումարված նիստում Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի կենտրոնական հանձնախումբը միաձայն որոշեց հանձնարարել Համաշխարհային Խորհրդի անդամ եկեղեցիներին Ձեր Եկեղեցու անդամակցությունը: Սույն որոշումը հաղորդվելու է մեր անդամ եկեղեցիներին, և վեց ամսվա ընթացքում սրանց մեկ երրորդից ավելին առարկություն չունենալու դեպքում, Ձեր Եկեղեցին այդ ժամանակ լինելու է լիիրավ անդամ եկեղեցիների մեր եղբայրության:

Պետք է ավելացնեմ, որ մենք մասնավորապես ուրախ էինք տեսնելով մեր նիստին ներկա եղող հայ ներկայացուցիչների այն դիրքը, որով նրանք բացատրեցին և պարզեցին երկու դիմումների ներկայացման հարցը: Այն վստահությունը, որ Հայոց Եկեղեցին ի հոգևորս մի Եկեղեցի է և որ ներկա դժվարությունները ժամանակավոր բնույթ են կրում, խոր տպավորություն թողին հանձնախմբի վրա, որովհետև նրանք ապացույց տվեցին բոլորին քրիստոնեական հաստատ դիրքի մասին: Մենք միայն կարող ենք հուսալ և աղոթել, որ Համաշխարհային Խորհրդի գործունեության մասնակցությունը օգնելու է այդ մերձեցման, որ անկասկած մեր Տիրոջ կամքին համաձայն է:

Հարգալից ողջույններով Ձերդ Սրբության,
Մնամ հավատարմորեն՝

Վ. Ա. ՎԻՍՍԵՐ Դ' ՀՈՒՖՏ
Ընդհանուր Քարտուղար
Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի

22 օգոստոսի 1962 թ.
ԺԸՆԵՎ